ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2022 թվականի N 1204 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 606-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 5-ի «Որպես նվիրատվություն անշարժ գույք ընդունելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու մասին» N 606-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) որոշման նախաբանը «2021 թվականի սեպտեմբերի 1-ի N 32-Ա» բառերից հետո լրացնել «և 2021 թվականի նոյեմբերի 12-ի N 69-Ա որոշումները» բառերով.

2) որոշման վերնագրում և ամբողջ տեքստում «նվիրատվություն» բառը և դրան համապատասխան հոլովաձևերը փոխարինել «նվիրաբերություն» բառով և դրան համապատասխան հոլովաձևերով.

3) որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում «երկամսյա» բառը փոխարինել «եռամսյա» բառով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ